

շոգեվար նաւ մը չէր յառաջ եկած ին-
շուան այն խաղաղական սահմանները՝
փրփրացընելու իր ջրադղորդ թևերով
այն հեզիկ և լսիկ ալիքները։ Ծ ոգենա-
ւէն իջնելով և քառաթինաւակ մը բազ-
մելով վայրկենի մէջ հասաւ վանաց
գուռը ՓրւնԿաս-Հովսէֆ-Աւ-
րուլու Խ տարիոյ նորահաս վայելահա-
սակ ազնուաշուք կայսրն , որ քանի մը
օր առաջ եկեր էր Ա ենետիկ և քաղ-
քին ազատ նաւահանգիստ հնորհեր էր .
և արդէն մեր Խ խիթարեան միաբա-
նութեան կողմէն այցելութիւն ընդու-
նած ըլլալսվ , ինքն ալ եկեր էր այսօր
հոս , ուր որ իրմէ առաջ իր հայրն ու
պապն ալընդունուած էին , իր բարեսի-
րութիւնը և վանքին հրաւելքը կատա-
րելու . հեան առած իր մեծ անձնապա-
հապետը , Ա ենետիզ զինուորական և
ներքին երկու քաղաքապետներն . քանի
մը զօրավար և դրան մեծերն : Դրանը
մէջ ընդունուեցաւ վանքի միաբանու-
թենէն և Խ ափայէլեան վարժարանին
դասէն , և միաբան գնաց նախ եկեղե-
ցին երկրպագելու ամենաթագաւորին
Խ տուծոյ , որոյ աջն է միայն հովանի
այսպիսի բարձր և պերճապասակ գլխոց ,
զոր բաղդ և ժամանակ իրենց զլիսաւոր
զիտելք մը կ'ընտրեն . և իր կայսերա-
կան տան յատուկ եղած բարեպաշտու-
թեան հարկը հատուցանելէն ետև ,
կէս ժամու չափ բոլոր Ա անքը պտըտե-
ցաւ , և քննելով մեծ զրատան մէջ զը-
րուած ձեռագիր՝ և 'ի վանս տպագրեալ
երեւելի մատեանքն , հոն սիրողաբար
ընդունեցաւ վանքին զրաւոր վաստակոց
մէկ պտուղը , և իւր անունը գրեց մեծա-
փառ այցելուաց դիւանին մէջ . վերջը
տպագրարանն ալ պտըտելով քանի մը
վայրկեան խօսելու ատեն՝ հոն ալ իր
առջել տպուած իրեն այցելութեան
յիշատակ պղտի քերդուած մը ինքնին
ընդունելով և կարդալով , ընտանեկան
զուարթութեամք մը և ազնուական
պարկեշտութեամք մը յայտնելով իր
գոհութիւնը և ինդութիւնը այս այ-
ցելութեան և ընդունելութեան վրայ՝
դարձաւնոյնակէս շոգենաւոյն 'ի քաղաք :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Արոբագրութիւն էռվասէան գաւառաց :

ԱՐՑԽԱՆՈՒԱԼ . կամ Հիմնուալ՝ է
գիւղաքաղաք Հայոց հինգ ժաման հե-
ռի 'ի Պարուց , 'ի հնումն պարսպա-
պատ , բայց այժմաւերակ . թէպէտ և
ուրեք ուրեք տեսանին մնացուածք որ-
մոցն . մերձ է յոյժ Լովկաս լերին , ան-
ցանէ առ նոլաւ ամենավճիտ և քաղ-
ցրահամ գետն Լ եախվու՝ որոյ ջուրքն
երթեալ խառնին 'ի Խուր գետ : ()դ
տեղւոյս քաջառողջ է քան զւազմաց այ-
լոց գիւղօրէից , վասն որոյ և բնակիչն
են գեղապատշաճք , անձնեայք և կո-
րովիք , և առ հասարակ են Հայք
Ա իրք և Հրէայք : Հայք և Հրէայք
չեն ընդ տէրամք , այլ են արքունական
հարկատուք . իսկ Ա իրք՝ ամենեքեան
են ստրուկք իշխանաց Ա բաց : Հարիւ-
րիւ չափ տունք են Հայոց՝ և ունին
յարմարաւոր եկեղեցի գմբեթածե ,
երկուս քահանայս՝ անտեղեակս լե-
զուի Հայոց . և 'ի բնակչաց հարիւրաւոր
տանցն Հայոց , ոչ գոն և ոչ երեք անձնիք
զիտակք լեզուիս Հայոց , և որք խօսինն
խեցրեկ և դժուարալուր իմն բարբառ
'ի կիր առնուն : Ճունք Ա բաց են 300
և աւելի ես . իսկ Հրէից 150 : Հայք
առ հասարակ են վաճառականք և ար-
հետաւորք , Հրէայք՝ շրջական վաճա-
ռականք , իսկ Ա բացիք առ հասարակ
հողագործք :

Դիրք՝ է գիւղ 'ի լայնատարած տէ-
ղւոջ պատկանեալ վանաց { Յունաց } ուր
նստի և վարդապետ նոցա . երեք ժա-
ման հեռի 'ի Հիմնուալէ , և տունք
Հայոց են անդր 30 : Ա բաց 60 , որք առ
հասարակ հողագործ են և ստրուկք վա-
նաց { Յունաց : Հայք ունին զմի փոքրիկ

եկեղեցի կրապատ, և չիք աստ ոք գիտակ լեզուի հայոց :

Այս գիւղ փոքրիկ, 'ի հնումն քաղաք, որպէս տեսի 'ի միում կոնդակի, շինեալ 'ի վերայ տափարակ տեղւոյ. այժմ հայք են յոյժ սակաւք, իբրև 10 տունք. այլ 'ի հնումն մինչեւ ց700 էին, (ըստ աւանդութեան ծերոց, որպէս և տեղին գուշակէ). եկեղեցի գեղչն է փայտեայ և անշուք, քահանայն հայոց՝ անծանօթամենեին լեզուի հայոց : Ա վեր քան զգիւղն՝ առ ստորոտով երկճղի լերին գոն երկու վանք կամ եկեղեցիք հայոց՝ որք և այժմ խակ են 'ի ձեռս հայոց՝ բարձրագմբէթք և հոյակապք ըստ երևելի երևելի եկեղեցեաց հայոց. բայց ամայի և անտէր. չիք ամենեին 'ի նոսա արձանագրութիւն ինչ : հեռի 'ի վանացս այսոցիկ քայլս քանի մի անցանէ գետակ ինչ բարեհամ և ախորժելի :

Աստ գոյ առ նմին եկեղեցի մի Ա բաց՝ ըստ ձեռյ հայոց եկեղեցեաց՝ որոյ և բնակիցք ասացին թէ շինող նորա էր յազգէ հայոց և վասն հայոց շինեալ զայն, բայց ասպայունածէս լեալ, և զնորոգ շինեալ եկեղեցի իւր՝ շնորհեաց աղգին Ա բաց :

Ա աղայ՝ է գիւղ միով ժամաւ հեռի յԱ գեղջէ 'ի գեղեցկավալայր դաշտի տոհմին իշխանաց (նիշաղաց) հայոց Ինկթաբէգովայ. բնակիցքն են ամեներին 'ի հայոց աղգէ և տունք նոցաթուով 22. ամենեքին են ստրուկ տոհմին Ինկթաբէգովայ և են հողագործք. զիտեն զլեզու հայոց՝ ըստ որում ժողովուրդք տեղւոյն գաղթականք են 'ի գաւառէն Ա բայախայ. թէպէտ ցանկան ազատութեան 'ի ստրկութենէ, բայց երեմն երեմն խոզընդոտն լեալ գեռ ևս կան այնպէս 'ի նոյն յառաջին վիճակի. ուստի և ըստ նախնական բնութեանն են համարձակախօս, հայրենասէր և մարդասէր՝ սակայն բարուք գոեհիկք :

Ա ուրամ՝ է աւան ինչ հեռի 'ի Կորույ միով աւուրբ, յատկաբար շինեալ վասն հայոց 'ի մէջ երկուց լայնածոց բըոց : ()դ տեղւոյն է առողջարար

և զով. թէպէտ ջուրն չէ այնքան գովելի : Ա ամսն այս շինեալ է ըստ ձեռյ Դօրուոյ առ ստորոտով բլրակի միոջ, յորոյ 'ի գագաթանն է անսառիկ ամրոց՝ և 'ի տեղիս տեղիս խոնարհեալ կան որմունք ամրոցին : Ոչ աւելորդ համարիմ յիշել աստէն և զառասպելական պատմութիւն ինչ վերաբերեալ վասն շինութեան այսմ ամրոցի . քանզի 'ի հիւսիսային կողմն ամրոցին արտաքոյ՝ երեխ յորմնն խոնաւութիւն, վասն որոյ տարածեալ է 'ի բերանս ամենայն Ա բաց թէ 'ի շինելն անդ զամբոցս վաստակեալ են շինողքն յոյժ յոյժ, քանզի զոր շինեին յերկրորդումն աւուր տեսանէին քանդեալ և կործանեալ . բայց ապա արք հանձարեղք խորհուրդ ետուն նոցա զի եթէ ոչ դիցեն յորմնն զորդի միամօր, 'ի զուր 'ի շինութիւն նորա աշխատ եղեալ վաստակին . վասն որոյ յանհնարս մտեալ ճարտարապետացն՝ հրամանաւ իշխանի երկրին գտին զմիամօր որդի մի և եղին զնա յորմն ամրոցին, և այնպէս ապա կանգնեալ է որմն : Ա բացիք ցայժմ երգեն զերգն յօրինեալ 'ի վերայ մանկան . ' Վայ կ չիլո Զուրաբ, ' սարտամդին . Վայ կ դէւալ մուխլամդին . ' որ թարգմանի 'ի մեր լեզու այսպէս, ' Վայ ինչ որդեակ Զուրաբ՝ մինչև շուր, ' (եհաս որմն). պատասխանէ որդին, ' Վայ ինչ մայրէ՝ մինչև շծունկս . ' և թէ խոնաւութիւնն այն՝ պատճառեալ է յարտասուաց տղային : Ծունք հայոց են 100, ունին զերկու քահանայս՝ յորոց մին չգիտէ զբարբառս մեր, իսկ միւսն փոքր մի իմանայ զայն . են աստ և երկու եկեղեցիք հայոց՝ մին յանուն Կատուածածնի, և միւսն սրբոյն Կրիգորի լուսաւորչի, կրապատ և առատաղնոցին փայտեայ՝ բայց անշուք տեսլեամք . մերքն պարապին 'ի վաճառականութիս և յարհեստու : Ծունք Ա բաց 40, ունին զմի փոքրիկ կրապատ եկեղեցի . իսկ տունք հրէից մինչեւ ց60 ամենեքին են փորեզիկք և ունին զմի ժողովարան : Բնակիցք տեղւոյս ամենեքին են ստրուկք արքունի . յաւանէս մղոնաշափ 'ի վայր զէպ 'ի հարաւ առ

Երի Կուր գետոյ՝ զոյ արուեստագործեալ բլրակ ինչ և 'ի վերայ այնք աղնիւ եկեղեցի սրբատաշ քարամբ շինեալ 'ի Ծամարայ թագուհւոյն Ա բաց յերեք տասաներորդ դարու՝ ամբողջ ամենեխն և առանց իւաթարելոյ դեռ ևս 'ի վերայ Ճանապարհին որ հանէ 'ի Տայս : Այս է սահմանն երկրին Քարթլայ և Խմերի :

Ոտիս՝ է գիւղ ինչ հեռի 'ի Գաօրոյ յարեմուեան կողմաննէ նորա՝ երկոտասան մղոնաւ յայնկոյս Ա եախվու գետոյն, երկայնաձիգ զրիւք, ուր բնակին հողագործք և ստրուկք իշխանաց Ա բաց : Ա երազնեայք ընդ ամէնն են 60 տունք. ունին զմի փայտեայ անշուք եկեղեցի . չիք անդ գիտակ և ոչ մի ոք 'ի մերազնէից զմեր լեզու, որպէս և 'ի Աուրան : Տունք Ա բաց են 100 :

Ճինեսխիդ՝ է գիւղ ինչ մերձ Գաօրոյ 2 մղոնաւ՝ դէպ յարեմուտս նորա, յայնկոյս Ա եախվու գետոյն՝ ուր բնակին մերազնեայք 13 տունք՝ ամենեքին հօղագործ և ստրուկք իշխանաց . ունին զմի փոքրիկ գմբէթազարդ եկեղեցի յանուն սուրբ Ա ստուածածնին . զոր շինեաց իշխանն Ա բաց՝ անուանին Դմիլախսուար՝ այն որ և նորհեայ ուսումնարանին Հայոց Հփխիսայ՝ ազնիւ այգի մի որոյ գինն հասանէ մինչև ցհինդ հազար մանէթ . և մեծամեծ զարդուք զարդարեալ սեպհական ընդիւք իւրուլք նորհեաց Հայոց 'ի յաւերժական յիշատակ և 'ի փառս պարծանաց անձին իւրոյ :

Լասա՛ է գիւղ հեռի 'ի Գաօրոյ 15 մղոնաւ՝ յարեելեան կողմաննէ նորա, հին քան զամենայն գիւղորայս և աւանս Հայոց Քարթլայ գուցէ և քան զՊարի ևս, քանզի յաւուրս նուիրակութեան իմոյ տեսի անդէն զհին կոնդակ մի, զորոյ ոչ յիշեմ զթուական ամացն, և էր թուղթն կաթողիկոսի Հայոց որոյ ձեռնազրեալ զոմն յեպիսկոպոս վասն այնը գաւառուի և տուեալ զմեռոն վասն վիճակին՝ զրէ զօրհնութեան թուղթո՝ յիշելով նախ զԼասաք քաղաք, նմանապէս և զԱուրամե զԼ:

Հյիշելով ամենեխն զՊարի . վասն որոյ և մեծամեծ տեսարանք զոն 'ի նմա, ըստ մեծի մասին աւերեալք և խաթարեալք . զորս տեսեալ կուսակալացն և նախարարաց Ա ուսաց զարմացեալք յապուշ կրթին յաղագս մեծագործ շինութեան նորա, զոր դոյզն բանիւք ստորագրել արժան համարեցայ : Հն Լասապն կամ նախսկին Լասապն է 'ի վերայ որձատաշ լերին և անմատչելի 'ի հարաւոյ, յարեելից և յարեմուից . քաղաքն և ամենայն տունք և շինուածքն են վիմափորք և Ճարտարարուեսք : Դան այժմ՝ 'ի նմին ամբողջ երկու յոյժ մեծամեծ դարպասք, բարձրաթերձք և գեղեցկակերտք, սրահակը Ճարտարագործք և Ճախարակեայք, բնակութինն թագուհւոյն որպէս ցուցանեն՝ է մի յերեելի մեծագործ շինութեց . սիւնք դարպասին խոյակք և խարիսխսք նոցա յինքենէ առեալ և 'ի քանի դստիկոնս բաշխեալ զվերնատունս և զնելքնատունս կազմեալ, բոլոր շինուածն միահաղոյն առեալ 'ի միակտուր քարանց . առանց մուծանելոյ ամենեխն և ոչ զմի ափ կիր յայնքան շինուածն . են 'ի նմին բազմութիւնք սենեկաց, այժմ բոլորն ունայն 'ի բնակչաց՝ ըստ որում բնակութիւն ժողովրդոց այժմ է 'ի ներքոյ այսոր Լասապի յայլ առանձին գիւղ: Ի կեղրոնէ նախսկին Լասապի, զոյ լայնաբաց գետնափոր ինչ մինչև ցվայր առափն Լուր գետոյն՝ որ անցանէ 'ի ներքոյ այսոր անուանեալ քաղաքի: Ա անդութեամբ պատմի թէ բազմօրեայ ժամանակաւ պաշարեցաւ քաղաքս 'ի թըլչնամեաց, և 'ի յուսահատիլ պաշարողաց 'ի գիշերի ոմն 'ի քաղաքայնոց լապտեր 'ի ձեռին ընդ գետնափորն անցանէ դէպ 'ի Լուր գետ, և թշնամեաց տեսեալ իսկոյն ընդ այն զրոհ տան և 'ի սուր սուսերի մաշեն զըլոր բնակիշն: Ա յժմ տունք Հայոց են թուով իբրև 32, ամենէքին հողագործք, բայց ստրուկք արքունի . զոն քանի մի տունք աղքատք, սուտանուն Դրշակունի վերաձայնեալք . աստ ևս չիք ոք գիտակ լեզուի Հայոց : Ա կեղեցին է հնաշեն յոյժ, զտանին

բեկորք քարանց յորում նշմարին տառք
Հայոց, բայց անվերծանելիք :

Խելթուրան՝ է գիւղ ինչ տոհմին իշխանաց Ծառամանեանց (Ո՞ամիկոնեանց) հեռի ՚ի Գաօրւոյ 7 մղնաւ, տունք Հայոց 60, իսկ Ա բաց յոյժ աւելի, ամենեքին են ստրուկք իշխանացն և են հողագործք . աստ ևս չիք ոք գիտակ լեզուի Հայոց :

Ո՞եջուսիս՝ է գիւղ մեծի իշխանին Ա բաց Ա քիսթովայ. տունք Հայոց 55, իսկ Ա բաց 500, Հայք ամենեքին են ոստայնագործք և ստրուկք իշխանին Ա բաց . աստ ևս չփտանի ոք գիտակ լեզուի Հայոց :

Տիրձնիս՝ է գիւղ Ա բաց և տունք բաղմաւորք . իսկ տունք Հայոց վեց . ամենեքին են ստրուկ իշխանացն Ա բաց և հողագործք :

Տղուեաւ՝ է գիւղ Ա բաց և յոյժ բաղմաւորք տունք են ՚ի սմին Ա բաց . իսկ տունք Հայոց 25 . ամենեքին են հողագործ և ստրուկ իշխանաց Ա բաց . դոյ աստ մատուռն մի Հայոց ուր դիմեն ուխտաւորք :

Քախվրէլ՝ է գիւղ ինչ Հայոց՝ յայն կողմն Կուր գետոյն, հեռի ՚ի Գաօրւոյ 10 մղնաւ՝ ամենեքին են Հայք՝ տունք 40, ունին զմի անշուք եկեղեցի, չիք ոք ամենեւին գիտակ լեզուի Հայոց . ստրուկք են եկեղեցւոյն Ա բաց՝ ըստ որում տեղին է եկեղեցւոյ նոցա և երկիրն է արգաւանդ և բերրի, և արք տեղւոյն ամենեքին են հողագործք : Հեռի ՚ի գեղջէն միով մղնաւ դէպ յարեմուտս է գետնափոր ինչ . յորում առ դրանն դոյ զանգակատուն մի, և մտեալ ՚ի ներք տեսանես զվիսնափոր եկեղեցի բաւական մեծութեամբ, և անցանելով ընդ դուռն եկեղեցւոյն ելանես ՚ի լայնարձակ պողոտայ մի, ուր գոն վիմափոր սենեակք ինչ, որոց ոչ պատուհանք գոն և ոչ այլ լուսամուտք, այլ նսեմք են և խաւարինք, այժմ եկեղեցին է ՚ի ձեռս Հայոց, և թէ պէտ շատ հետամուտ եղէ բայց չփտի անդանօր ոչ արձանագիր և ոչ այլ ինչ ՚ի գրուածոց :

Եխալքալակ՝ է աւան Հայոց՝ գաղթական ժողովրդոց ՚ի Գամճակայ և յերձախայ, հեռի ՚ի Գաօրւոյ վեց ժամաւ, տեղին է ջրաւէտ, վասն որս և զինին անուանի, օդն առողջարար . տունք Հայոց ՚ի նմին 60, ամենեքին վաճառականք են արհեստաւորք և այգեգործք, և քաջ գիտեն զիւզու Հայոց . ձոխք են և հետամուտք ընչից . զառաջնն ստրուկք էին իշխանաց Ա բաց Ծառարխանեանց տոհմին, բայց յետ ժամանակաց թօթափեցին զլուծ իշխանութեան նոցա . ունին զմի կրապատ եկեղեցի, դոյ ՚ի գեղջն և բերդ մի նորոգ կառուցեալ :

Լաւթիսիս՝ է գիւղ հեռի ՚ի Տփիսիսայ 8 ժամաւ՝ զաւ ՚ի վեր լերին . տեղին է այգաւէտ, տունք Հայոց 50, ամենեքին են հողագործք և այգեգործք և ստրուկք եկեղեցւոյն Ա բաց՝ ըստ որում տեղին պատկանի եկեղեցւոյ նոցա . չիք գիտակ ոք ՚ի բնակչաց լեզուի Հայոց, ունին սոքա զմի կրապատ եկեղեցի :

Չեգվէ՝ է գիւղ հեռի ՚ի Տփիսիսայ 6 ժամու, ՚ի հարաւոյ կողմանէ Լուր գետոյ ընդ անհարթ դաշտով, այգաւէտ և ջրարբի . տունք Հայոց 20, ամենեքեան հողագործք և այգեգործք . ումանք ՚ի Հայոց ստրուկք : Գիտեն ումանք զիւզու Հայոց և ունին զմի կրապատ եկեղեցի :

Յիւեթայ կամ Ո՞ծխիթայ՝ է գիւղ հեռի ՚ի Տփիսիսայ 5 ժամու . անդ է պատրիարքարան Ա բաց հոյակաս և ամենապանչելի վանք, յորում այժմ ոչ գոն սենեակք կամ բնակութիւնք նախկին միաբանութեանց քակեալք և աւերեալք, միայն շրջապատ պատրիարքին դոյ ամբողջ բոլորովին . յանդիման այսր վանաց է փոքրիկ վանք յայնկոյս գետոյն Ծարքելս կօյս ՚ի վերայ սրածայր լերին սուրբ Խաչի ՚ունեայ . որ այժմ ՚ի սպառ ունայն և անշքացեալ է : Հեռի ՚ի պատրիարքարանէն կիս մղոնաւ է նոյնափէս գերահրաշ վանք կուսանաց՝ ուր մեծագցի և իշխանացն տիկնայք բնակին՝ բայց յերկիւղէ փլու-

զանելոյ՝ փակեալ է դուռն եկեղեցւոյն հրամանաւ Առաջնորդին իւրեանց Տըթիսայ : Այս ՚ի վանս է փոքրիկ մատուռն տեղի Ճգնութեան կուսին՝ Առնեայ՝ մեծարեալ յամենայն ազգաց : Տունք Հայոց ՚ի գեղջն են 25 կամ 30 ամենեքին հողագործք և ստրուկք վանաց . իսկ տունք Արաց մինչև 60 , որք նոյնպէս են արք ստրուկք և հողագործք :

Առխրան՝ հեռի է ՚ի Հիսէթայ 4 ժամու՛ հանդերձ կից մանր երկու զիւղօք . տունք Հայոց են անդ 200 , ունին զմի պատուական կրապատ եկեղեցի նորակերտ յանուն Ուսաւորչի , գիտեն ամենեքին զՀայոց լեզու , ըստ որում գաղթականք են յԱրցախոյ յամի 1799 ՚ի ժամանակս ներքինի աղայ Ա՛ահմադիսան շահի , ամենեքին են ստրուկ մեծի իշխանին Առխրան սպարոնի Իւգրատունոյ՝ որ նստի ՚ի պարսպապատ բերդի մեծ արտօնութեամբ և սպասահարկութեամբ բաղմաթիւ ծառայից և աղախնեայց : Տունք Արաց են 500 թուով , ամենեքին առ հասարակ են ստրուկք և միանգամայն հողագործք :

Ախալգօրի՝ (ԱրԿարի) է աւանինչ Հայոց , յօրում են տունք Հայոց հարիւթուով . ամենեքին տեղեակք լեզուի Հայոց , որոց և սանդեայ մանկունք խօսին ՚ի հայ բարբառ . ըստ պատմելոյնոցա գաղթականք են յԱնոյ , ամենեքին են վաճառականք . տեղի բնակութեան իւրեանց է լեռնային և այգաւէտ յոյժ . զրացիք են լեռնականաց (սից և Խփուլից զորոց զեղուսն գիտենքած , ունին զմի ծխական եկեղեցի , բայց տասն մատրունս , ըստ նախկին բնութեան իւրեանց՝ (Անեցւոց) կրօնասէրք են և մարդասէրք , սիրեն յոյժ զգինի , գեղեցիկ են մարմնով և բարեկազմ և յաղթանգամք . ամենեքեան են ստրուկք տոհմի իշխանին Արիսթովայ , և ինքեանք են Ճոխք և Ճարտարք ՚ի տուրեառս :

Դուշեթ՝ է քաղաք փոքրիկ ՚ի վերայ Ճանապարհին Ուուսաստանի . օդ տեղացն և ջուր աղբերն բարեյարմար .

տունք Հայոց 165 . ամենեքին են վաճառականք և արհեստաւորք , ունին զմի աղիւսակերտ գմբեթայարկ եկեղեցի գեղեցկաշէն . գիտեն ամենեքեան զեղու Հայոց . գոյ և բերդն նախսին ՚ի մէջ քաղաքիս՝ ուր է այժմ հիւան դանոց տէրութեանն և բանտարանն . յառաջաջ բերդին է լայնատարած հրապարակն շրջապատեալ ՚ի կրպակաց ըստ տարագու եւրոպացւոց : Քանի մի մղոնաւ հեռի ՚ի սմանէ՝ ՚ի վերայ արքունական ճանապարհին են իջեանք զօրաց Ուուսաց և մեծամեծաց նոցա , գեղեցիկ քառանկիւնի երկրաշափական ձեռվոր գտեսողմն զարմացուցանէ :

Անանուր՝ է աւան ինչ կառուցեալ առ ստորոտով լերին մեծի դէմ յանդիման մեծին Կովկասու լերին ՚ի հարաւոյ Արագու գետոյն , տունք Հայոց են 12 . ամենեքին են վաճառականք և արհեստաւորք և արքունի հարկատուք . գիտակ և լեզուի Ուուսաց : Անդ ցամաքային կողմն սա է դուռն Ուուսաստանի և սահմանք երկուց տէրութեանց Ուուսաց և Արաց , այժմ միաւորեալ ընդ տէրութեանն Ուուսաց . տունք Արաց համեմատ են տանց Հայոց : Այս է հրաշալի վանք կամ եկեղեցի Արաց գեղեցիկ կերտուածովք և ՚ի սմա թաղեցաւ ՚ի նորումն Պաէնաթէլ Ա՛ետրապօլիտն Ամէրէթոյ . ըստ բանաւոր պատճառի հրամանաւ արքունի ՚ի Ուուսատան ածել կամելով , վասն սաստիկ ծերութեանն տկարացեալ վախճանեցաւ աստ՝ և եղաւ յայսմիկ եկեղեցւով : Այս է զարմն պանծալի մերազգի Յակովը Ազարեանց՝ որ կանգնեալ ընմեծաշէն հոյակապ ապարան հիւաննոց ՚ի հինգ զստիկոնս բարձրացեալ և ՚ի զանազան սենեակս բաժանեալ ձրի ասպինջականէ զանցաւորս . մինչ ՚ի գալ կայսեր Ուուսաց Կիկուլայ Պալովէի Առաջնոյ յայցելութիւն յայսկոյս Կովկասու տեսեալ զայն՝ հարցանչ գտանուտեառնէն , և մինչ տեղեկանայ եթէ ընդէր կառուցեալ է այն , իսկոյն ձեռն ՚ի յուս եղեալ Հակովլայ՝ գովէ զմարդասիրութիւն նորա և գոհանայ

զբարերար ինստիտուտ աստուածասիրի և
բարեպաշտօն առնն :

Ծննօթութեանք . 1 իւրաքանչիւրաւան՝ յիշեալ՝
ի վերցյդրեալ վիճակն իմերէթոյ և Քարթլայ՝
ունին ոմանք զ15 , ոմանք զ20 , և ոմանք աւելի և
ոմանք պակաս գիւղորայու յորոց ոմանք յիշատա-
կեցան ՚ի ստորագրութեան աստ և ոմանք ոչ . ՚ի
պատճառս ոչ գոյց ՚ի նոսատ մերայնոց :

2 ՚ բաց թողաք զբանի մի փոքրիկ գիւղորայս
հայաբնակս խառն ընդ Վրացիս , քանզի ըռանէին
տառանձին եկեղեցիս . և յիւրաքանչիւր գեղջ կամ
6 տուն և յունան 1 կամ 2 տունք գոյին հայոց :

3 Բոլոր թիւք տանց հայոց վիճակին իմերէթոյ
և Քարթլայ հասաննեն ՚ի 1700 , կամառ աւելին ՚ի
1800 , ՚ի միասին առեալ և զուուս քաղաքացն Գա-
րոյ և Քութայիսի :

4 Կամուրջ ջիւէթայ շինեալ ՚ի վերայ կուրդ գե-
տոյ ՚ի հարաւային կուսէ մեծի վանիցն ջիւէթայ .
քառորդ մզոնաւ հեռի ՚ի նմանէ յալբունուսաւ ա-
ճըրդաւ յանձնեալ զիցինս ծախուց վաթսուն հազար
մանէթի , սրբատաշ քարամբրյերից տկանց բաղկա-
ցեալ և երկաթեայ վանդակաւ շրջապատեալ յե-
զերս առաջնն համարի ՚ի կամուրջս յայսկոյս Կով-
կասու ՚ի նոր շինութիւնս ՚ի աւերութեանն Ռու-
սաց . ՚ի բաց առեալ զհոյակապ պանծալի կա-
մուրջն ստորդաց ձորոյն շինեալ յԱնոյշ թագու-
հոյն ՚ի վերայ մեծի գետոյն որձագրար վիմօք ,
գործ արդարեալ մեծի գովութեանն , որ զարդիս ևս
կայ կանգուն ամեննեին գեղաշուք և չքեղադէմ , և
զիամուրջն մեծ ՚ի վերայ գետոյն մեծի խրամաց :
Դ գալ կայսեր ՚ի կերպայսի Ա . յայցելութիւն ՚ի
կորմանն հայոց և Վրաց ՚ի մի կովմն նորա կանգ-
նեցաւ արձան ՚ի յիշատակ գալստեան կայսեր Ռու-
սաց : Մերձ կամ կից մարթ է ասել սմա և զիա-
մուրջ մի շինեալ յաղեւոյց վասն հեղեղաց , որք ՚ի
գարնան ժամանակի խափանել կարեն զանցաւորս
՚ի ճանապարհորդութենէ :

(ԱԿԱՐՏԻ ՅԱՐԱԳԵՒԿԱՑՈՒ)

Աղէկ գիտցիր որ ժամանակը ստակ է : Թէ որ
դու օրը ասաւը զուրուշ կրնաս վաստարիլ , և ձեռ-
քերդ ծոցդ գրած ինչուուն կէսօր պարապ տագին
անդին պտղախ և մէկ զուրուշ մըն ալ զումորդու-
թեանդ խարճէս , մի կարծեր որ այսշափի կը նստի
քեզի վտասդ . ասկէ ուրիշ անդին հնդ զուրուշ
ալ պարապ աեղը ծովք նետեցիր :

Աղէկ գիտցիր որ սաակը բազմածին է բնութիք :
Ստակը ստակ կը ծնանի , ան ալ ուրիշ մը կը ծնա-
նի , այսպէս հետ զշետէ : Աշխատողին հնդ զու-
րուշը վեց կը լլայ , վեցը եօթն , եօթն ալ ութը ,
և այլն . այսպէս հետզհետէ ինչուան հարիւր , հա-
զար , և այլն կը հասնի : Ամբկայ կծիկ մըն է որ որ-
շափ փաթթես այնշափ կը հաստընայ , և շահն ալ
ըստ այնմերթալով կը մեծնայ : Ո՞վ որ յղի կով մը
սպաննէ անոր բողոր սերունդն ալ կը ցնջէ ինչուան
հազար ազգ : Ո՞վ որ զսւրուշ մը սպաննէ բոլոր
անկէ գալիք շահն ալ ծովք նետած կը լլայ :

ՖՐԱՆԳԼԻՆ ԱՌ ՊՐԵՍՆԱՏ ԿՐՊԱԿԱՌՈՐԾ

Բ' ԱԿԱՐՏ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐԱՎԱՐՈՒՐՔ

1850 բարեայն մէջ և անէլ եռեւ եղած աս-
տեղաբաշխական , բնաբանական և ուրիշ
գլխաւոր գիւղերը :

Ա .

Լ Ա Յ Տ Ե Ղ Ա Բ Ա Ը Ը Ո Ւ Թ Ե Ա Ն պատմու-
թեանը մէջ նշանաւոր տարիներէն մէկն
ալ անցեալ տարի եղաւ , վասն զի իրեք
մոլորակ և երկու գիսաւոր գտուեցան ,
ինչպէս (Կրագրիս մէջ ալ ծանուցած
ենք մեր ընթերցողաց :

Լ ուաթին մոլորակը մայիսի 11 ին զի-
շերը , ըստ նոր տոմարի , ՚ի ապօլայ
տէ կասպարիս անունով աստեղաբաշ-
խը գտաւ . որ առաջ ալ՝ այսինքն է 12
ապրիլ 1849 Հիւգէտ անունով պզտի
մոլորակը գտեր էր : — Լ յա նորագիւտ
մոլորակիս ալ անունը Պարթենոպէ զրաւ
որ է ՚ի ապօլիս քաղաքը , ուղելով որ
իւր գեղեցիկ ու զուարձալի , կամ ըստ
Վ իրգիւեայ անուշակ հայրենեաց յիշա-
տակը երկնից երեսն ալ անմահանայ :

Լ յրկրորդ մոլորակը գտաւ Հայնտ
1 անտրայի երեւելի աստեղաբաշխը սեպ
տեմբերի 13 ին , որ առաջ ալ ուրիշ եր-
կու մոլորակ գտեր էր . մէյմը իրէնը
կամ ծիւածնէ՝ 13 օգոստոս 1847 . մէյմ՝
ալ Փըրան՝ 18 հոկտեմբեր 1847 : —
Լ յա նորագիւտ մոլորակիս անունը ՚ի
պատիւ Կնդղիոյ թագուհոյն ինքը
Վ իրգորիտ զրաւ , որ յաղթութիւն ըսել
է . բայց ինչպէս որ կ'երեւայ այս անու-
նը ամենուն ընդունելի չէ , մանաւանդ
Վ իմբիկացի աստեղաբաշխից : Լ սկէ ա-
ռաջ ալ նոյնպէս ՚ի պատիւ Կոսկանայի ,
Կնդղիոյ և Լ յրկուց Վիկիւեայ թագա-
ւորներուն անուամբը կոչուած ուրիշ
քանի մը երկնային մարմնոց անուններն
ալ ընդունելի չեղան . նոյն իսկ Հերշե-
լի գտած Լ յրանոս մոլորակն ալ , որ ին-
չուան հիմայ Կնդղիոյ մէջ ասող գէոր-